«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ

Մասնակցի անուն,ազգանունը՝ Գոհար Հովսեփյան

Դպրոցը՝ Արմաշի Մաղաքիա Օրմանյանի անվան միջնակարգ դպրոց

Դասավանդած առարկան՝ Պատմություն

ք. Արարատ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ---------- 3

ԳԼՈՒԽ 1 ---------- 4

Հայ հայդուկային շարժում: ---------- 4

ԳԼՈՒԽ 2---------- 11

Կուսակցությունների ստեղծումը ---------- 11

Եզրակացություն---------- 14

Դասի վարման մեթոդիկա---------- 15

Գրականության ցանկ----------16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի մեջ մեծ տարածում գտավ հայդուկային կամ ֆիդայական շարժումը: Հայդուկ հունգարերեն բառ է, նշանակում է պարտիզան, ֆիդայի արաբերեն բառ է, նշանակում է անձնազոհ: Հայդուկային շարժումն Արևմտյան Հայաստանում սկսվեց 19-րդ դարի 80-ական թվականների կեսերից, այն իր սուր ծայրով ուղղված էր բոլոր տեսակի ճնշողների և բռնակալների դեմ: Մեծ մասամբ իբրև ճնշող և բռնակալ հանդես էին գալիս քուրդ ռազմական ավագանին՝ ցեղապետերը և թուրք պաշտոնեությունը: Վրիժառու հայդուկի զենքն անհրաժեշտության դեպքում ուղղվում էր նաև հայ մատնիչների դեմ: Չհանդուրժելով լլկանքները՝ հայ գյուղացին մի որևէ քուրդ աղա կամ թուրք ոստիկան սպանելուց հետո թողնում էր տուն, տեղ, ընտանիք և բարձրանում լեռները: Երբեմն՝ մենակ, երբեմն՝ խմբով, կապ պահպանելով շրջակա հայկական գյուղերի հետ, հայդուկներն ապաստանում էին լեռներում: Նրանք անսպասելի հարձակվում էին կառավարական զորքերի, քուրդ հրոսակախմբերի կամ հարկահանների վրա: Հայդուկային խմբերն առաջնորդվում էին չգրված օրենքներով, այնտեղ տիրում էր երկաթյա կարգապահություն:

Նպատակ՝- Ծանոթանալ հայդուկային շարժմանը,իմանալ շարժման առաջացման պատճառները,այն կապելով համիդյան վարչակարգի վարած քաղաքականության հետ:Ուսումնասիրել նշանավոր հայդուկների կյանքը, գործունեությունը,նրանց անձնազոհ վարվելակերպը և մարտական ոգին ազատագրական պայքարի գործում:

Կարևորել ազգային կուսակցությունների դերը հայդուկային պայքարի կազմակերպման գործում:

Վեր հանել հայդուկային պայքարի դրական և բացասական կողմերը:

ԳԼՈՒԽ 1

Հայ հայդուկային շարժում:

Ֆիդայական շարժում, թուրքական բռնատիրության դեմ արևմտահայերի ազգային-ազատագրական զինված պայքարի ձև: Ձևավորվել է **XIX դ. 80-ական թթ.** կեսին: Սկզբնական շրջանում հստակ քաղաքական նպատակներ չուներ: Խնդիրն էր պաշտպանել հայ բնակչությանը թուրք հարստահարիչների ոտնձգություններից, վրեժխնդիր լինել նրանց կամայականություններին ու չարագործություններին զոհ դարձող արևմտահայ աշխատավորի համար: Հայդուկների գործողությունները տարերային էին ու ցրված: Հայերի կյանքը, կայքն ու արժանապատվությունը պաշտպանելիս ֆիդայիները միշտ ստացել են ժողովրդի օգնությունը: Նրանց շարքերը մշտապես լրացրել են պայքարին զինվորագրված հսկրենասեր նոր երիտասարդներ: Հայ մարտիկներն աչքի են ընկել համարձակությամբ ու անձնազոհությամբ, հաճախ, կռվի բռնվելով թշնամու գերակշիռ ուժերի հետ, դիմակայել են ու հաղթել: Դա ոգևորել է հայ բնակչությանը՝ զինված պայքարի ելնելու հարստահարիչների դեմ: Հայ հայդուկային առաջին խմբերը առաջացել են **Տարոնում**, **Վասպուրականում, Կեսարիայում և Արևմտյան Հայաստանի** այլ վայրերում: Առավել հայտնի էին Մարգար Վարժապետի,Արաբոյի, Ռ. Շիշմանյանի (Դերսիմի քեռի), Գ. Արխանյանի (Մնձուրի Առյուծ). Ա. Աչըքպաշյանի, Մինասօղլու խմբերը. Մեծ և Փոքր «Չելլոները» և ուրուրիշներ: Այս շրջանում հայդուկների որոշ ղեկավարներ (Ա Աչըքպաշյան և ուրիշներ) փորձեր են արել համաձայնեցնել կամ նույնիսկ միավորել

անջատ-անջատ ֆիդայական խմբերի գործողությունները: Սակայն աշխատանքներն այդ ուղղությամբ հետևողական չէին և շոշափելի արդյունք չեն տվել: Հաջողություն չի ունեցել և չի իրականացել որոշ հայ գործիչների գաղափարը՝ դաշինք հաստատել **Օսմանյան կայսրությունում** ոչ թուրք, ժողովուրդների մասնավորապես քրդերի, ազգային ազատագրական շարժման հետ: Հայդուկները որոշակի աշխատանք են կատարել՝ ամրապնդելու կապերը հայ ժողովրդի երկու հատվածների միջև . նրանցից շատերը այցելել են Թիֆլիս, տեսակցել արևելահայ նշանավոր գործիչների հետ. նրանց օգնությամբ զենք ու զինամթերք ձեռք բերել, կամավորներ հավաքագրել Արևմտյան Հայաստան ուղարկելու համար: 1880-90-ական թթ. կովկասահայ երիտասարդների, ինչպես նաև Ռուսաստանում ապրող հայերի շրջանում մեծացել է հետաքրքրությունը արևմտահայերի ազատագր. պայքարի հանդեպ, և գնալով ծավալվել է օգնության շարժումը: Շատ հայ երիտասարդներ, գլխավորապես ուսանողներ, գալիս էին Թուրքիային մոտ կամ սահմանակից շրջաններ (Ալեքսանդրապոլ, Կարս, Երևան, Իգդիր, Ախալցխա և այլն). կազմում հայդուկային խմբեր և զենք ու զինամթերքով փորձում անցնել Արևմտյան Հայաստան, հայտնի են Վարդան Գոլոշյանի, Սարգիս Կուկունյասի ձեռնարկները: Կազմակերպվել են նաև զինատար խմբեր, որոնք զենք էին փոխադրում Ռուսաստանից. Անդրկովկասից, Պարսկաստանից:

Անդրանիկ Օզանյան

Անդրանիկը ազգային-ազատագրական շարժման գործիչ, փառաբանված հայդուկապետ և զորավար:

Անդրանիկ Թորոսի Օզանյանը ծնվել է 1865 թվականի փետրվարի 25-ին՝ Արևմտյան Հայաստանի Շապին Գարահիսար քաղաքում: Անդրանիկ հայերեն նշանակում է «առաջնեկ»: Նրա հայրական նախնիները եկել են հարևան Օզան գյուղից վաղ 18-րդ դարում և բնակություն հաստատել Շապին Գարահիսարում թուրքերի հետապնդումներից խուսափելու համար: Նրա նախնիները Օզանյան

ազգանունը վերցրել են իրենց հայրենի բնակավայրի անունով։

Անդրանիկ Օզանյանը սովորել է ծննդավայրի Մուշեղյան վարժարանում։ 17 տարեկանում ահաբեկել է իր հորն անարգած թուրքին և բանտարկությունից խուսափելու համար գնացել է Կոստանդնուպոլիս, աշխատել զինագործարանում, ապա անցել Ռումինիա։ 1891 թ-ին անդամագրվել է հնչակյան կուսակցությանը, շուրջ մեկ տարի անց՝ ՀՀԴ-ին, որից վերջնականապես հեռացել է 1917 թ-ին։ 1890-ական թվականներին զինվորագրվել է Գուրգենի (Բաղդասար Մալյան), Աղբյուր Սերոբի հայդուկախմբերին։ Զենք ձեռք բերելու նպատակով եղել է Սևաստոպոլում, Բաթումում, Թիֆլիսում, Կարսում, Սբ Էջմիածնում, Թավրիզում, Սալմաստում և այլուր։ Համագործակցել է Դժոխք Հրայրի, Նիկոլ Դումանի, Սեպուհի, Մեծն Մուրադի հետ։

Աղբյուր Սերոբի սպանությունից (1899 թ.) հետո Տարոնում հայերի ինքնապաշտպանությունը կազմակերպել են Անդրանիկն ու Դժոխք Հրայրը։ Անդրանիկի համբավը տարածվել է հատկապես 1901 թ-ի նոյեմբերի՝ Մշո Սբ Առաքելոց վանքի և 1904 թ-ի օգոստոսի՝ Աղթամարի կռիվներից հետո։ 1904 թ-ի վերջին եղել է Իրանում ու Այսրկովկասում. հանդիպել է հասարակական-քաղաքական գործիչների հետ, 1914–20 թթ-ին Թիֆլիսում մտերիմ էր Հովհաննես Թումանյանի հետ։

1905–06 թթ-ին հայ-թաթարական կռիվների ժամանակ զենք հայթայթելու նպատակով մեկնել է Ֆրանսիա և Բուլղարիա։ 1906 թ-ին հրատարակել է հայդուկային կռվի իր ռազմուսույցը՝ «Մարտական հրահանգներ» կանոնագիրքը։ 1908 թ-ի երիտթուրքական հեղաշրջումից հետո հանդես է եկել ՀՀԴ-ի և երիտթուրքերի համագործակցության դեմ, մերժել թուրքական խորհրդարանի անդամ դառնալու դաշնակցության առաջարկը։

Նախիջևանից Ջուլֆայով Պարսկաստան անցնելով՝ Անդրանիկի զորամասը Խոյի մոտ անակնկալ բախվել է թուրքական 11-րդ դիվիզիայի զորամասերից մեկի հետ և ստիպված վերադարձել է Զանգեզուր։ Զորքի և բազմաքանակ գաղթականության համար ստեղծված բավական դժվար պայմանների պատճառով Անդրանիկը մնացել է Զանգեզուրում (հիմնականում՝ Սիսիանում) մինչև 1919 թ-ի գարունը, ղեկավարել Զանգեզուրի ինքնապաշտպանական կռիվները թուրքերի և մուսավաթականների դեմ։ Սակայն, հիասթափվելով Հայաստանի նկատմամբ Անտանտի վարած քաղաքականությունից և դժգոհելով հայրենի կառավարության՝ իր հանդեպ ցուցաբերած



վերաբերմունքից, 1919 թ-ի ապրիլին եկել է Սբ Էջմիածին, զորամասի գույքն ու զենքը հանձնել է կաթողիկոսին, զորացրել զինվորներին և մեկնել Ֆրանսիա, իսկ 1922 թ-ից հաստատվել է ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում:

Աղբյուր Սերոբ

Աղբյուր Սերոբ, /Սերոբ Վարդանյան /ծնվել է 1864 է-ին Սոխորդում/Խլաթի գավառում/ գյուղում,մահացել է 1899 թ-ին Գելիեզուզանում/Սասուն/, ազգային ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի, ՀՀԴ կուսակցության անդամ:Խուսափելով թուրք իշխանությունների հետապնդումներից՝ 1891-ին հեռացել է ծննդավայրից՝ Պոլիս, այնուհետև Ռումինիա: 1895-ին Խլաթում կազմակերպել է ինքնապաշտպանությունը:

1898 է-ի հոկտեմբերի 20-ին Բաբշենի նշանավոր կռվից հետո հեռանում է Սասուն: ԱՂԲՅՈՒՐ Սերոբի մղած բոլոր կռիվները ավարտվել են հաղթանակներով: Թուրքական իշխանությունները մեծ փրկագին էին խոստացել հզոր հայդուկապետի գլխի համար: 1898 թ-ին քուրդ ցեղապետ Բշարե Խալիլը մատնության միջոցով իմանալով Աղբյուր Սերոբի գտնվելու վայրը՝ թունավորում է նրան: Աղբյուր Սերոբի զինակից ընկերն էր իր կինը՝

Սոսեն , որին հետագայում ժողովուրդը տվեց Սոսե մայրիկ անունը։ Աղբյուր Սերոբի սխրանքների մասին ժողովուրդը հյուսել է բազմաթիվ երգեր։

Գևորգ Չաուշ

Գևորգ Չավուշը (իսկական ազգանունը՝ Ղազարյան) 1886–88 թթ-ին սովորել է Մշո Սբ Կարապետ վանքի դպրոցում, որը նրա ուսուցիչ Հովհաննես վարդապետ Մուրադյանի ջանքերով վերածվել էր ազատագրական գաղափարների տարածման կենտրոնի։ Մարտական մկրտությունն ստացել է առաջին ֆիդայիներից մեկի՝ Արաբոյի խմբում։ Մասնակցել է Սասունի 1891– 1894 թթ-ի ինքնապաշտպանական մարտերին, հատկապես աչքի է ընկել Տալվորիկի 1893 թ-ի կռիվներում։ 1894 թ-ի Սասունի ապստամբության պարտությունից հետո, ի թիվս այլ ֆիդայիների, ձերբակալվել ու բանտարկվել է Բիթլիսում, ապա՝ Մուշում։

1896 թ-ին Գևորգը փախել է բանտից, ապաստանել Սասունում, ապա միացել է Գուրգենի (Բաղդասար Մալյան) և Հրայրի (Արմենակ Ղազարյան) խմբերին։ 1899 թ-ին՝ Աղբյուր Սերոբի սպանությունից հետո, 1900 թ-ին կազմակերպել է մատնիչ Ավեի, ապա Անդրանիկի հետ՝ քուրդ Խալիլ բեյի սպանությունները։ 1901 թ-ի ապրիլին գլխավորել է Բերդակի, իսկ դեկտեմբերին՝ Նորշենի կռիվները, որոնք կարևոր տեղ ունեն հայդուկային

շարժման պատմության մեջ: 1901 թ-ի նոյեմբերին մասնակցել է նաև Մշո Սբ Առաքելոց վանքի կռվին:

1904 թ-ի գարնանը Գևորգ Չավուշը գլխավորել է Սասունի Իշխանաձոր և Տալվորիկ գյուղերի ինքնապաշտպանական ուժերը: Ապրիլի 11-ին՝ Շենիկ գյուղի մոտ, 14-ին և 15-ին՝ Մերկերի շրջակայքում, 17-ին Գելիեգուզանի մոտ հայերը համառ մարտեր են մղել: Ապրիլի 19-ին թուրքերն սկսել են գնդակոծել հայկական դիրքերը: Մի քանի օր դիմադրելուց հետո հայերն ստիպված թողել են Գելիեգուզանը և քաշվել մոտակա բարձունքները՝ շարունակելով դիմադրությունը մինչև մայիսի 14-ը:

Սասունի դեպքերի արձագանքները հասել են Եվրոպա: Եվրոպական տերությունների միջամտությունից խուսափելու համար թուրքական իշխանությունները ստիպված հրաժարվել են Սասունի հայերին բնաջնջելու մտադրությունից:

Ապստամբության պարտությունից հետո Գևորգն անցել է Վան, սակայն 1904 թ-ի օգոստոսին Աղթամար կղզում տեղի ունեցած խորհրդակցությունից հետո, որպես ՀՀԴ կուսակցության ղեկավար գործիչ, վերադարձել է Տարոն: 1906–07 թթ-ին գործել է Ռուբեն Տեր-Մինասյանի հետ: Հայ-քրդական համագործակցություն ստեղծելու նրա ջանքերն ապարդյուն անցան: Զոհվել է մայիսի 27-ին՝ Սուլուխի հայտնի կռվում:

Գևորգ Չավուշին են նվիրված Կարո Սասունու «Սարերու ասլանը» (1966 թ., Բեյրութ), Ստեփան և Կարո Պողոսյանների «Ինձ բահ տվեք...» (1990 թ.) և այլ երկեր:

Արագածոտնի մարզի Աշնակ գյուղում ազգականների ջանքերով 1976 թ-ին հիմնադրվել է Գևորգ Չավուշի թանգարանը, որի հարավ-արևմտյան պատին նրա հարթաքանդակն է: Գևորգ Չավուշի հուշարձանը (քանդակագործ՝ Լևոն Թոքմաջյան) կանգնեցվել է Երևանում՝ համանուն հրապարակում: Նրա անունով կոչվել են փողոցներ, դպրոցներ Երևանում, ՀՀ և ԼՂՀ այլ վայրերում:

Ժողովուրդը երգեր է հյուսել Գևորգ Չավուշի մասին:

Արաբո/ Առաքել Մխիթարյան/

Ստեփանոս Մխիթարյան՝ առավել հայտնի է Արաբո և Առաքել անուններով. հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ՝ ֆիդայապետ, առաջին ֆիդայիներից (1880-ականներին)։

Առաքելը ծնվել է 1863 թվականին Արևմտյան Հայաստանի Բիթլիս նահանգի Սասուն գավառի Կուռթեր գյուղում։ Սովորել է Մուշի Առաքելոց վանքի դպրանոցում։ Գործել է Սասունի,Տարոնի գյուղերում։ Ինքնապաշտպանության նպատակով կազմակերպել է զինված խումբ։ 1882 թվականին թուրքական իշխանությունները Բերդակ գյուղում ձերբակալել են Արաբոյին և դատապարտում 15 տարվա բանտարկության, սակայն փախչելով բանտից, շարունակում է իր գործունեությունը։ 1889 թվականից սկսած այցելել է Կովկաս, 1892 թվականին Թիֆլիսում մասնակցել է ՀՅԴ կուսակցության առաջին ընդհանուր ժողովին։

1893 թվականին Գյալառաշ (Սև բերդ) կոչվող ձորում ընդհարվել է քրդերի հետ և զոհվել իր հինգ ընկերների հետ։

ԳԼՈՒԽ 2

Կուսակցությունների ստեղծումը

1890-ական թթ. սկզբից Արևմտյան Հայաստանում նոր թափ են ստացել ազատագրական շարժումը, զինված ելույթներն ու ինքնապաշտպան, մարտերը, ինչը պայմանավորված էր հայ ազգային կուսակցությունների՝ **Հնչակյան Կուսակցության և Հայ Հեղափոխական Դաշնակցության** ստեղծումով ու Արևմտյան Հայաստանում նրանց կազմակերպությունների առաջացումով (Հայ հայդուկային շարժման 2-րդ փուլ): Եվ քանի որ ազգային կուսակցությունները ծնվել էին հայ ժողովրդի ազատագրական պայքարի հետևանքով, և նրանց հիմն, նպատակն էր **Հայկական հարցի** լուծումը՝ Արևմտյան. Հայաստանի ազատագրումը, ուստի պետք է համագործակցեին այնտեղ գործող հայդուկային խմբերի հետ՝ շարժմանը տալով համազգային բնույթ: Սկզբից ևեթ կուսակցությունները ֆիդայիներին համարել են իենց մարտական ուժը, իսկ ֆիդայիները պատրաստ էին ընդունել ազգային կուսակցությունների գաղափարական ղեկավարությունը: Հայդուկային շարժումը. որ սկզբնավորվել էր անկախ հայ քաղաքական կուսակցություններից, հետագայում զարգացավ նրանց ղեկա-վարությամբ: Ֆիդայիների հարելը հնչակյաններին կամ դաշնակցականներին սկզբնական շրջանում պայմանավորված էր նրանով, թե այդ կուսակցություններից որն էր ավելի ազդեցիկ Արևմտյան Հայաստանի այս կամ այն շրջանում: Քիչ չեն դեպքերը, երբ ֆիդայիները նախ գործակցել են հնչակյանների , ապա դաշնակցականների հետ: Հետագայում՝ XIX դ. 80-ական թթ. 2-րդ կեսից դաշնակցությունը, դառնալով ւսվելի ազդեցիկ, ղեկավարեց հայդուկային շարժումը, և մեծ թվով ֆիդայիներ դարձան դաշնակցության անդամ: Լայնորեն ծավալվում էր ֆիդայական շարժումը Արևմտյան. Հայաստանի շատ շրջաններում և Կիլիկիայում: Երբ սուլթան **Աբդուլ Համիդ II-ը** ձեռնամուխ եղավ Թուրքիայում հայ բնակչության զանգվածային բնաջնջմանը (տես Հայկական կոտորածներ 1894-96), ֆիդայիները ակտիվորեն մասնակցեցին հայերի ինքնապաշտպանությանը (Խլաթ, Սասան, Վան, Շապին Գարահիսար և այլն): Հայդուկների հաջող գործողությունները նորից հույս ներշնչեցին Արևմտյան Հայաստանում ընդհանուր

ապստամբության նախապատրաստման և անցկացման, ինչպես նաև սուլթանական բռնության դեմ կայսրության բոլոր ճնշված ժողովուրդների միացյալ ճակատ ստեղծելու համար: Այս գաղափարը պաշտպանեցին դաշնակցական որոշ գործիչներ: Սակայն քրդերի հետ միություն կազմելու փորձը արդյունք չտվեց: Ավելին, Թուրքիայի կառավարող շրջաններին հաջողվեց իրենց կողմը քաշել քուրդ ցեղերին ու ցեղապետներին ընդդեմ հայերի:

Պայքարի հիմնական ուժը դարձյալ զինված հայդուկային խմբերն էին. որոնք համառ դիմադրություն էին ցույց տալիս թուրք ու քուրդ հրոսակներին, մարդասպաններին. «ջանբեզարների» ավազակախմբերին (տես Բաբշենի կռիվ 1898, Խաստուրի կռիվ 1899, Ապաղանքի կռիվներ 1899, 1900, Ցրոնքի կռիվ 1899, Բերդակի կռիվ 1901, Նոր- շենի կռիվ 1901, **Առաքելոց վանքի կռիվ** 1901). Հայդուկային շարժման պոռթկում էր 1904-ի Սասունի ապստամբությունը: Այս շրջանում հանդես եկան ժողովրդի մեջ մեծ համբավ հանած ֆիդայիներ **Աղբյուր Մերոբը, Անդրանիկը, Գևորգ Չավուշը, Նիկոլ Դումանը, Ժիրայրը, Հրայրը, Սպաղանաց Մակարը** և ուրիշներ: Նրանցից շատերը հերոսաբար ընկան անհավասար մարտերում՝ ժողովրդի մեջ թողնելով բարի հիշատակ:

XX դ. սկզբիս շարունակվում էր **Կովկասից** և **Իրանից** զենքի ու զինամթերքի փոխադրումը Արևմտյան Հայաստան: Խմբերը կազմակերպում, հանդերձավորում և զինում էին հայ ազգ. կուսակցությունները: Այդ ճանապարհին, սակայն. խոչընդոտ էին ինչպես թուրքերը, այնպես էլ ռուս սահմանապահ իշխա-նությունները, ինչի հետևանքով այդ ձեռնարկումները հաճախ մատնվում էին անհաջողության: 1903-ի մայիսի 25-ին սահմանն անցել և Սասուն է հասել Թորգոմի գլխավորած «Մրրիկ» հեծյալ խումբը (33 մարդ): Նայն թվականի սեպտեմբերի սկզբին Գերմանիայում ուսանող Աբրահամյանը 50 մարդուց կազմված զինված խմբի գլուխ անցած փորձել է անցնել սահմանը և ձերբակալվել է: Սեպտեմբերի 30-ին Բասենում թուրքական զորաջոկատի հետ ընդհարվել է «Կայծակ» հեծելախումբը (53 մարդ): 1904-ի մայիսի վերջին **Աշոտ Երկաթի**(Արմենակ Լևոնյան) և

քդեցի Պողոսի (Թոխմախ) գլխավորած մարտական խումբը (35 մարդ) Իգդիրից Սասուն գնալիս, Արճեշի Սոսկան գյուղի մոտ ընդհարվել է քրդերի հետ, պաշարվել թուրքական կանոնավոր բանակի կողմից և զոհվել անհավասար կռվում: Նույն ամսին Փոխիկի ղեկավարությամբ 14 հեծյալից կազմված խումբը Սալմաստից Վան ճանապարհին ընդհարվել է թուրք զինվորների ու քրդերի հետ և զոհվել: Հունիսին Դժոխքի (Վաղարշակ) գլխավորած **«Դժոխք» հեծելախումբը** (29 մարդ) Արևմտյան Հայաստան անցնելիս Զևինի մոտ կռվի է բռնվել թուրք զինվորների ու քրդերի հետ և պարտվել: Նույն ամսին Նիկոլ Դումանիհեծյալ խումբը (18 մարդ, այդ թվում՝ բժիշկ Յա. Զուսվրիևը), սահմանագլխին բախվելով թուրքական զինված ուժի հետ, ցրվել է և վերադարձել Պարսկաստան: Հուլիսի 24-ին 102 մարդուց կազմված հայ կամավորների մի խումբ Գայլ Վահանի և Կապիտան Բաբկենի (Նիկողոս Տեր-Խաչատրյան) ղեկավա¬րությամբ անցել է սահմանը Արարատի ուղղությամբ: «Արտավազդ» խումբը Գայլ Վահանի գլխավորությամբ շարժվել է դեպի Մոսուն գյուղը, իսկ «Մասիս» խումբը Միհրանի (Գաբրիել Քեշիշյան) գլխավորությամբ՝ դեպի Զոր: Հանդիպելով թուրքական զինվորների և քուրդ հրոսակների՝ ընդհարվել են: Խումբը հետ է դարձել, անցել սահմանը և ցրվել: Արևմտահայերին օգնության շտապող այդ խմբերը չեն հաջողել, քանի որ կազմակերպվել են հապճեպ, առանց գործողությունների մշակված ծրագրերի, հաշվի չեն առնվել առկա պայմաններն ու հնարավորությունները: Հայտնի են նաև վրեժխնդրության և առանձին թուրքական ու քրդական խմբեր ոչնչացնելու նպատակով կազմակերպված հայդուկային երթեր. առավել հայտնի է Խանասորի արշավանքը (1897): 1904-ի **Սասունի ապստամբությունից** հետո հայդուկային շարժումը վայրէջք է ապրել: Մնալով հիմնականում որպես առանձին խմբերի գործողություններ (տես Ալվառինջի կռիվ 1905, Սոլուխի կռիվ 1907)՝ Հայ հայդուկային շարժումը դատապարտված էր անհաջողության: Գործողությունների միասնական ծրագրի բացակայությունը. ուժերը միավորելու ապարդյուն փորձերը, ինչպես նաև թշնամու ուժերի գերակշռությունը հիմնականում պատճառներն էին. որոնք կանխորոշեցին հայդուկային շարժման ելքը: Դրա հետ մեկտեղ ֆիդայիների քաջությունը. անձնազոհությանը, ամենաաննպաստ պայմաններում պայքարի նրանց պատրաստակամությունը մեծ դեր խաղացին հայ ժողովրդին

ազատագրական պայքարի պատրաստելու համար: Հայ հայդուկային շարժումը. հայ ժողովրդի ազգ- ազատագրական պայքարի վառ էջերից է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայդուկային շարժումը հայ ազգային-ազատագրական շարժման փառավոր էջերից է: Այն նպաստեց ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, ինքնապաշտպանությանը: Բազմաթիվ հայ խիզախ վրիժառուներ իրենց սխրանքներով անմահացան ժողովրդի սրտում, ապացուցելով, որ ավելի լավ է զոհվել պատվով իբրև մարդ, քան քարշ տալ խղճուկ, ստրկական գոյություն:

Այսպիսով, XIX-րդ դարի 60-80-ական թվականների հայ իրականության մեջ հանդես եկան մի շարք քաղաքական խմբակներ և կազմակերպություններ, որոնք հետապնդում էին Հայաստանը օտարի լծից ազատագրելու վեհ նպատակ: Դրանք կատարեցին թե քարոզչական աշխատանք, թե գործական նախապատրաստական քայլեր հայրենիքի ազատագրման ուղղությամբ: Վերոնշյալ խմբակներից ու կազմակերպություններից թերևս ամենակարևորներն էր «Պաշտպան հայրենյացը», որը ազդեցիկ էր և բազմանդամ: Կարևորությունը առաջին հերթին դրսևորվում էր նրանում, որ այն սերտ կապեր էր հաստատել «Սև խաչ» և այլ կազմակերպությունների հետ և արդյունքում հիմնել էր գաղտնի զինագործական արհեստանոց, քանի որ գործունեության ընթացքում հայթայթում էր զենք:

Հայ ազգային - ազատագրական շարժումը կրում էր ժողովրդական բնույթ: Շարժման ժողովրդական բնույթի մասին է վկայում նաև այն փաստը, որ Օսմանյան կարգերի դեմ պայքարի ելած հայ հայրենասերների գաղտնի խմբակներում ու կազմակերպություններում ընդգրկված անդամների ճնշող մեծամասնությունը գյուղացիներ, արհեստավորներ, ուսուցիչներ և ժողովրդի ծոցից ելած այլ մտավորականներ էին: Բավական է նշել, որ Էրզրումի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությանը պատկանելու մեղադրանքով ձերբակալված 70 մարդկանցից 20-ը գյուղացիներ էին, 3 ուսուցիչ և ընթերցարանի պետ, մեկը նկարիչ, 3-ը առևտրականներ, 13-ը կոշկակարներ, 6-ը դերձակներ, մնացածները դարբիններ, հյուսներ, ջրաղացպաններ և այլն:

Դասի վարման մեթոդիկա՝

ÞÙµ³ÛÇÝ ³ßË³ï³Ýù, ×³Ý³ãáÕ³Ï³Ý-ï»ëáÕ³Ï³Ý ³ßË³ï³Ýù, ½ñáõÛó, մտագրոհ, ýÇÉÙÇ ¹ÇïáõÙ:

Դասարանը բաժանել 3 խմբի,

1 խումբ-- ներկայացնել հայդուկային շարժման առաջացման պատճառները

2 խումբ—ներկայացնել ազգային կուսակցությունների գործունեությունը

3 խումբ—ներկայացել նշանավոր ֆիդայիներին

Î³Ñ³íáñáõÙÁª

ø³ñï»½, ³ïÉ³ë, å³ëï³éÝ»ñ, Ñ³Ù³Ï³ñ·Çã, պրոյեկտոր, ·ñù»ñ, տետրեր, նկարներ, ·áõÝ³íáñ ÃÕÃ»ñ, Ù³ñÏ»ñ ¨ ³ÛÉÝ:

Գրականության ցանկ

1. *Հայ Ժողովրդի պատմություն, հ. 6.Ե., 1981:*

2. (2005) Ով ով է. Հայեր. Կենսագրական հանրագիտարան, հատոր առաջին: Երևան: ՀՀ ԳԱԱ, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, էջ 150:

3. *Աղայան Շ. Պ, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1976:*

4. *Թառոյան Կ. Զ., Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դ վերջերին-XX դ. սկզբներին, Ե, 1980:*

5. *Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. 1- 7, Թեհրան, 1982:*

6. *Անդրանիկ, Առաքելոց վանքին կռիվը, Ե., 1992 :*